



ԵՐԽՈՊԱՆ



Օ Ր Ա Գ Ի Ր Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն

Թ Ի Ի 20.

1863

Գ. ՀԱՏՈՐ



ՆԱԻԱԿԱՆ ՎԻՐԱՐՈՅԺԸ (Վերջ):

Էպէտ պատմելիքս ըստ քնքեան շատ պարզ է, ըսաւ Պր. Պէօննս, բայց ինծի համար զարհուրելի հետեւութիւններ ունեցաւ:

Պրէստ քաղաքը նաւէ ելլելով, թեթեւընթաց կառքով մը ճամբորդութիւնս յառաջ կը տանէի: Ես առանձին էի. քովս 400,000 ֆրանքի դրամասեղանի տոմսակ կար: Ընդարձակ ծովեզերքէ մը պիտի անցնէիք, որն որ Ս. Միքայէլի ծովեզերք կը կոչուի:

Լոնէ, որն որ ունկնդիրներէն քիչ մը հեռու կեցած՝ պատմութիւնը մտիկ կ'ընէր, աս անունն որ լսեց, սարսափեցաւ, գլուխը վեր վերցուց եւ աւելի մտադրութեամբ սկսաւ մտիկ ընել: Պր. Պէօննս, որն որ Լոնէին ամէն շարժումները կը դիտէր, խօսքն այսպէս յառաջ տարաւ:

Երբ որ նոյն ծովեզորը հասանք, գիշերն արդէն կոխած էր, եւ չորս կողմն անթափանցելի մութ մը կը պատէր: Կառքը սկսաւ թաց աւազին վրայէն անցնիլ, այնպէս որ ոչ անիւներուն կոնչիւնը եւ ոչ ձիերուն ոտնաձայնը կը լսուէր: Աս կերպով յառաջ երթալն իմ վրաս արտաքոյ կարգի ազդեցութիւն մը կ'ընէր. կարծես թէ կախարդական միջոցով մը յառաջ կը մղուէի:

Չախ կողմն ընդարձակ տեղոյ մը մէջ զանազան երեւոյթներ ու կերպարանքներ կը տեսնէի, որոնք մերթ կ'երեւային, մերթ աներեւոյթ կ'ըլլային: Նոյն կողմանէ խառնակ ու շիտի շշուկ մը կը լսուէր, որն որ ծովուն տեղատուութեան հանած ձայնն էր:

Տասը ընկէի չափ աս կերպով յառաջ գացի. բոլորովին աս զարմանալի տեսարանէն յափշտակուած էի: Նոյն միջոցին կառքը ժայռի մը առջեւէն սկսաւ անցնիլ: Իրկլաս, գոչեց կառապանը մտրակով վտանգալից տեղը ցուցնելով: Աս անունն ընդ մտքիս մէջ տողորուած պիտի մնայ եղեր:

Հագիւ թէ ժայռն անցած էիք, մէյ մ'ալ յանկարծ կառքը կեցաւ. աղաղակ մը լսեցի, որուն վրայ անմիջապէս մարդու մը մարմնոյն գետինն իջնալու ձայնն ականջս հասաւ: Անմիջապէս դէպ ի կառքին դուռն ածապարեցի, գլուխս դուրս հանեցի. սակայն բան մը տեսնելու ատեն չունեցայ. շուտ մը գլուխս բոլորովին ջախջախած՝ կառքին մէջ ինկայ:

Բոլոր ունկնդիրներուն զարհուրանաց ձայները զՊր. Պէօննս ընդմիջեցին: Իսկ ինք աչուրները դէպ ի Լոնէ դարձնելով, տեսաւ որ անիկայ յառաջուն գիւղին մէջ կեցած էր. բայց երեսին գունատութիւնն արտաքոյ կարգի էր:

Պր. Պէօննս պատմութիւնը յառաջ տանելով ըսաւ. Երբ որ քանի մ'օր ետքը ինք իրենս եկայ, իմացայ որ մէկ քանի ձկնորս զիս ծովեզերքը գտնելով եղած տունս բերած էին. կառքս բոլորովին կողոպտուած եւ կառապանը մեռած էր: Երեք ամիս պէտք եղաւ, մինչեւ որ վերքերս առողջացան:

Իսկ աւազակները չբռնուեցան, հարցուցին շատերը միաբերան:

Նոյն ատեն եղած հետազոտութիւնները յաջող ելք մը չունեցան, պատասխանեց Պր. Պէօննս: Սակայն ես միշտ յոյս ունէի որ օր մը բանն երեւան կ'ըլլէ, վասն զի գողցուած իրերուն մէջ գործոց մ'ալ կար, որուն մէջի պատուական գոհարները դիւրաւ կրնան ձանջցուիլ: Ի մէջ այլոց ճարմանդ մ'ալ կար, որն որ ասոր շատ կը նմանէր:

Աս ըսելով Պր. Պէօննս ձեռքը բռնած ճարմանդը ցուցուց: Նոյնը զննելու համար քանի մը հոգի ոտք ելլելու վրայ էին, մէյ մ'ալ յանկարծ Մորթէթ օրիորդն աղաղակ մը արձակեց: Ամէնքը սկսան անոր նայիլ, եւ ի՞նչ կայ, ի՞նչ եղաւ, գոչեցին:

Պր. Պէօննս ոտք ելլելով, Անոր պատճառն ալ կրնամ զրուցել, ըսաւ:

Կ'աղաչեմ, սիրելի մօրեղբայր, գոչեց օրիորդը Պր. Պէօննսին բազկացը մէջ նետուելով:

Անգղիացին կեցաւ եւ բազկացը մէջ ընդունեցաւ զօրիորդը՝ որն որ անմիջապէս մարեցաւ:

Ամէնքն անոր չորս կողմը ժողովուելով, խելքը գլուխը բերելու զբաղած ատեննին, Լոնէ մէկ երկու անգամ ապշած չորս կողմը նայեցաւ, անկէ ետքը քնէն արթնցածի պէս՝ դռնէն դուրս ելաւ, աներեւոյթ եղաւ:

Պր. Պէօռնսին բոլոր մտադրութիւնը Մորբէթ օրիորդը գրաւած ըլլալով, առժամն ուրիշ բանի չէր կրնար զբաղիլ: Բայց երբ որ անիկայ ինք իրեն գալէն ետեւ խուցը տարուեցաւ, մօրեղբայրը տեսնելով որ բաւական հանդարտած է, զինքն առանձին թող տուաւ, եւ քովի խուցն երթալով՝ սկսաւ վեր վար պտտիլ: Մէյ մ'ալ յանկարծ զգուշութեամբ մը դուռը բացուեցաւ, եւ Եդուարդ Լոնէ դրան սեամին վրայ երեւցաւ:

Անգղիացին զարմանքէն, մանաւանդ թէ վախէն ետ ետ քաշուեցաւ: Երիտասարդ Գաղղիացին կեցաւ, բայց իր կեցուածքին վրայ այնպիսի հանդարտութիւն մը կար, որ Պր. Պէօռնսին վախը շուտ մը փարատեցաւ:

Անտարակոյս ինծի չէիք սպասեր, Պարոն, ըսաւ Եդուարդ ցած ձայնիւ:

— Այնպէս է. մարդասպանները հասարակօրէն աւելի խոհեմութիւն կ'ունենան:

— Ես ալ աւելի խոհեմութիւն կ'ունենայի՝ եթէ մարդասպան ըլլայի: Բայց կ'ուզեմ վրաս ունեցած սիսալ կարծիքնիդ շեղել:

Պր. Պէօռնս տարակոյս ցուցնելով՝ գլուխը շարժեց:

Կ'աղաչեմ շատ շուտ վճիռ մի կարէք, շարունակեց Լոնէ: Ընելու խոստովանութիւնս՝ ինք զինքս բոլորովին արդարացնելու համար չէ, հապա միայն ցուցնելու համար՝ որ ձեր կարծածին չափ յանցաւոր չեմ: Իսկ ձեզի դէմ գործուած եղեռնագործութեան մէջ մաս չունենալս անկից յայտնի է, որ նոյն ատեն ես Գաղղիայէն հազարաւոր մղոններով հեռու էի: Աս վկայականները նոյնը կը հաստատեն:

Անգղիացին Լոնէին իրեն տուած թղթերը վեր ի վերջ մը քննելէն ետքը, Ուրեմն աս ճարմանդն ինչպէս ձեր ձեռքն անցաւ, հարցուց: Գարձեալ ինչո՞ւ համար իմ պատմութիւնս լսած ատեննիդ այնչափ պլայելեցաք: Յայտնի է որ եթէ յանցանքին մէջ մաս չունիք, գոնէ նոյնը ձեզի ծանօթ էր:

— Այո՛, ծանօթ էր:

— Նոյն ճարմանդը Մորբէթ օրիորդին ընծայ ըրած ատեննիդ՝ կ'ըսէիք որ ձեր մօրմէն ժառանգութիւն մնացած է: Ուրեմն յանցաւորը ձեր ընտանիքէն մէկն է:

Լոնէ սարսուաց: Անգղիացին իր վերջին խօսքով ձեռքը միջոց մը տուած էր, որով կրնար դիւրաւ ինք զինքն արդարացնել. . . . Սակայն նոյն խորհուրդն ունենալուն վրայ ամօջաւ:

Ձէ, չէ, գոչեց, ծնողքս միշտ պատուաւոր անձինք եղած են:

— Ուրեմն ո՞՞րին մէջ ինչ մաս ունեցած էք:

— Ո՞՞րին ժառանգութիւնն առի, աս է յանցանքս: Մտիկ ըրէք, Պարոն, ամենայն ինչ եղածին պէս կ'ուզեմ պատմել:

Պր. Պէօռնս յայտնեց որ զինքը մտիկ ընելու պատրաստ է:

Ան ատեն Լոնէ ամէն պատահածներն իրեն պատմեց: Պետրոս Գրանուին գաղտնիքն իմանալը, անոր մահը, գանձին տեղն իմանալէն ետքը՝ Իրկլաս ժայռին վրայ ըրած հետազոտութիւնները, եւ վերջապէս ան հետազոտութեանց յաջող հետեւութիւնը:

Աս երկայն խոստովանութիւնը լմնցնելէն ետքը, Պր. Պէօռնսին թերթակալ մը եւ գլոց մը տալով, Ձեր չորսհարիւր հազար ֆրանգը հաստատուն տեղեր շահու դրուած են, ըսաւ. թերթակալին մէջ ամբողջ ընկալագիրները կը գտնէք, ինչպէս նաեւ իմ մէկ ձեռագիրս՝ որով նոյն գումարին տէրն ըլլալնիդ կը հաստատուի: Իսկ կորսնցուցած գոհարներնիդ գլոցին մէջն են:

Պր. Պէօռնս թղթերն ու գլոցը զննեց. եւ տեսնելով որ ամենեւին բան մը պակաս չէ, Պարոն, ըսաւ Լոնէին, պատմած պատմութիւննիդ ինծի այնպէս զարմանալի կու գայ, եւ ստացուածքս նորէն ձեռք ձգելս անանկ անակնկալ դէպք մըն է, որ չեմ գիտեր ինչ ըսելիքս. թէ արդեօք ձեզի շնորհակալ ըլլամ, չէ նէ յանդիմանեմ: Աս միայն կրնամ ըսել որ մեծ յանցանք մը գործեր էք, բայց . . . :

Յանցանք, կ'ըսէք, Պարոն, ընդմիջեց Լոնէ. ըրածս եղեռնագործութիւն մըն է: Ո՛հ, ճշմարտութիւնը ծածկել չեմ ուզեր: Գրանուին գաղտնիքն իմանալէն ետքը, քիչ մը ժամանակ անձինս հետ կուեցայ, բայց պարապ տեղ. ծածկուած գանձն երբեք մտքէս չէր ելեր: Ամէն գիշեր երազիս մէջ Իրկլասի ժայռերն ու հոն գտնուած թերթակալն ու արկղը կը տեսնէի: Հարուստ ըլլալու համար, առապելներուն մէջ պատմուածին պէս՝ ուրիշ բանի հարկաւորութիւն չունէի, բայց եթէ ըսել՝ Հարուստ ըլլալ կ'ուզեմ: Ընելու ուրիշ բան չունէի, բայց եթէ ժայռին զարնել, եւ անմիջապէս առջեւս գանձ մը կը բացուէր: Ո՛չ մարդ մեռցնել հարկաւոր էր եւ ո՛չ ուրիշ չարիք մը գործել. միայն պէտք էի սրբել գանձին վրայի արիւնը՝ որով ուրիշ մը նոյնն արատած էր, եւ առնուլ տանիլ:

Վերջապէս յաղթուեցայ: Սակայն աղքատութեանս հետ խաղաղութիւնս ալ կորսնցուցի: Ամէն տեղ ետեւէս դժոխային ոգիներ ինկած կը կարծէի: Ամէն բոպէ կարծես թէ մէկն ինծի կ'ըսէր, Գողցածդ ետ տուր: Պարապ տեղ ինք իրենս կ'ըսէի որ վախս սնտոի է. փուճ տեղ կը կրկնէի որ գանձին տէրը շատոնց մեռած է. տղու մը պէս կը վախնայի, առանց պատճառը գիտնալու:

Ասոնք ըսելէն ետեւ՝ Լոնէ, որուն երեսներուն յառաջուան գունատութեան՝ սաստիկ կարմրութիւն մը յաջորդած էր, ոտք ելաւ. եւ թէպէտ կը տեսնուէր որ ահամայ կը բաժնուի ու ինք իրեն դէմ բռնութիւն կը բանեցնէ, սակայն եւ այնպէս առանց տատամելու եւ հաստատութիւնը կորսնցնելու, պարտքը կատարող մարդու մը հանդարտութեամբն Անգղիացւոյն բարեւ տարով, դուրս ելաւ: Պր. Պէօննս թէպէտ իսկզբան կ'ուզէր զինքը կեցնել. բայց ետքէն միտքը փոխելով՝ երթալուն չընդդիմացաւ, աղէկ սեպելով որ ըսելէն երկրորդ առտու զրուցէ:

Հետեւեալ օրը՝ երբ որ կ'ուզէր հետը տեսնուիլ, իմացաւ թէ առտուն ծագելուն պէս, ելեր գացեր է, առանց մէկու մը բան ըսելու: Թէ ինք եւ թէ մանաւանդ Մորբէթ օրիորդը, որուն այնչափ միայն իմացուցած էր մօրեղբայրը, որ իր յափշտակուած հարստութիւնն ըստ պատահման Լոնէին ձեռքն անցած էր, անհամբերութեամբ իրիկուն ըլլալուն կը սպասէին. բայց պարապ տեղ, նոյն օրն ալ՝ հետեւեալ օրն ալ Եգուարդ չգարձաւ:

Վերջապէս տասն օր վերջը երբ որ ալ գրեթէ յուսահատած էին, մէյ մ'ալ նամակ մ'ընդունեցան որուն մէջ Լոնէ Պր. Պէօննսին կը ծանուցանէր թէ Գաղղիայէն ճամբայ ելլելու վրայ եղող պատերազմական նաւու մը մէջ կը գտնուի, եւ իրեն պատճառած նեղութիւններուն համար թողութիւն խնդրելէն ետքը, կը յայտնէր որ միտքը դրած է կամ իր պարտքը կատարելով՝ մեռնիլ, որով եւ իր անուան բերած անարգութիւնն արեամբը լուալ. եւ կամ այնպիսի պատուաւոր կերպով եւ այնպէս յառաջանալ, որ կարենայ առանց կարմիրնալու մարդիկներուն երեսը նայիլ:

Թէպէտ եւ Անգղիացին՝ պատուոյ նկատմամբ ունեցած խիստ սկզբանցը համաձայն՝ աս որոշումը չէր կրնար չհաւնիլ, բայց եւ այնպէս շատ ալ սըրտմեցաւ. որովհետեւ երիտասարդին՝ իր յանցանքը խոստովանելու կերպէն՝ վրան մեծ համարում ստացած էր, եւ իր քրոջն աղջկան երջանկութեան համար կը բաղձար որ բաներն ուրիշ կերպով մը վերջացած ըլլային:

Ասկից կրնայ մակաբերուիլ թէ որչափ մեծ ցաւ ունեցաւ, երբ որ տարի մը ետքը Գաղղիական եւ Անգղիական նաւատորմին մէջ եղած մէկ կռուոյն ստորագրութեան մէջ հետեւեալ կտորը կարդաց. Ան անձինքներուն մէջ՝ որոնց մահուան վրայ կ'ողբանք, կը գտնուի նաեւ Եգ. Լոնէ վերաբոյժը, որն որ իր պաշտօնը կատարած ժամանակը՝ թշնամեաց գնդակէ մը զարնուելով ինկաւ: Աս մահը մասնաւորաբար անոր համար ընդհանուր ցաւ պատճառեց, վասն զի նոյն յուսալից երիտասարդն իր պաշտօնին պարտքերն ամենայն ճշգրտութեամբ ու մարդասիրութեամբ կատարելէն զատ, իր խօսքերովը եւ մանաւանդ իր օրինակուն ամենուն քաջաբերութիւն եւ նոյն իսկ ամենէն քաջասիրտներուն բարի օրինակ կ'ըլլար:

ԱՐՈՒՆԵՍՏԱԿԱՆ

Անցեալ տարուան Լոնտոնի համալսարանի ստորաբաժնից տեսարանին վրայ ընդհանուր տեսութիւն:

Հայտնի է որ երկոտասներորդ բաժնին, այսինքն նաւաշինութեան ու նաւազննութեան մէջ, առաջին տեղը կը բռնէ Անգղիա: Սակայն որչափ ալ զԱնգղիա աշխարհքիս առաջին զօրաւոր ծովային տէրութիւնը համարինք, այսու ամենայնիւ Գաղղիա ալ Անգղիայի դիմացը կրնայ ելլել ու մրցիլ, թէպէտ եւ արուեստից տեսարանը տեսքի հանածն եւ ոչ յիշատակութեան արժանի է: Իսկ Ամերիկա, որն որ աշխարհքիս երկրորդ վաճառականական ծովային զօրութիւնն ունի, քաղաքային պատերազմին պատճառաւ ամենեւին բան խաւրած չէր: Նաւաշինութեան մէջ Անգղիայի ըրած յառաջագիմութիւնն ըստ արժանեաց պատուելու համար, հարկ է արուեստէ հասկըցող ըլլալ: Նոյն տէրութիւնը նաւաշինութեան մէջ ունեցած յառաջագիմութիւնը ցուցնելու համար, օգտակար կարգադրութիւն մ'ըրած էր, այսինքն իր նաւերուն ասկէ 300 տարի յառաջ ունեցած պարզ ու հաստ շինուածներէն սկսած՝ ետեւէ ետեւ աւելի կատարեալ վիճակի մէջ մտածները կարգադրած էր, որով հանդիսատեսը Բրիտանացւոց նոյն ճիւղին մէջ ունեցած յառաջացումը բուն առաջին պարզ սկիզբներէն մինչեւ այսօրուան անլուր բարձրութիւնը կրնար դիտել: Վասն զի նոյն իսկ ամենէն հասարակ մարդն Եղիսաբեթ թագուհւոյն հաստ ու անհեղեղ նաւակին (կախիկն) եւ Վիկտորիա թագուհւոյն վայելուչ ու շքեղ թագաւորական շոգենաւին մէջ եղած ակներեւ տարբերութիւնն անմիջապէս կը տեսնէր: Ընդհանրապէս ամէն տեսակ ու զանազան մեծութեամբ նաւերու օրինակներ տեսքի հանուած էին: Հնդկաստանի նաւակներէն սկսեալ մինչեւ Նորթմպերլէնտ ու Հիմալայա զրահապատ կրկնայարկները:

Բեդերսպուրկի, Ռիդ-ճանէյրոյի ու Գորէն հակի նաւարաններն ալ քանի մը շքեղ օրինակներով ներկայացուած էին: Ասոնց մէջէն յիշատակուելու արժանի է հարաւային Կրէօնլանտիայի բովագործութեան ընկերութենէն խաւրուած նաւակ մը, որն որ յաւիտենական սառուցին մտերը պղինձ պեղելու ետեւէ կ'իյնայ: Բոլորովին նոր բաներէն մէկն էր Վլեսգոյ քաղաքէն Տիւնլոյ անուն մեքենագործին շոգեխոյ ըսուած նաւը, որն որ նաւեր ջարդելու եւ ընկղմելու սահմանուած է: Բաւական օրինակ հանդէս հանուած էր նաեւ մարդու կեանքն ազատելու համար շինուած դիւրաշարժ նաւակներէն, զորոնք տարւէ տարի շատ ցընելու եւ կատարելագործելու մեծապէս փոյթ կը տանի Անգղիայի մէջ նորերս հաստատուած վտանգեալներն ալատելու ընկերութիւնը: Բաց ասկէ՝ Անգղիա իր նաւերն ուրիշ տեղ չգտնուող լուսատու աշտարակներու գեղեցիկ յօրինուածքով ամէն վտանգ-

ներէ կը պահպանէ: Զարմանալի բարձր կատարելութեան հասած է նոյն աշտարակները լուսաւորելու կերպը: Նոյն վախճանին համար ելեկտրական լոյս գործածելու եղած փորձերը պարապ ելլելէն ետեւ հիմայ առ հասարակ ցոլացուցիչներով (Réflecteur), արկանդեան կանխեղ կը գործածեն, որոնք իրենց առանցքին վրայ կը դառնան, եւ ժամանակ ժամանակ զանազան գոյներ կը ցոլացընեն:

Որչափ որ Գերմանիա երկոտասներորդ բաժնին մէջ անշուք ու աղքատ էր, այնչափ ալ երեքտասներորդ, այսինքն՝ բնագիտական ու մաթեմատիքական գործիքներու բաժնին մէջ, առատ ու շքեղ օրինակներով ներկայացուած էր: Աս բաժնին բոլորովին նոր ու բարեգէտներու (Physiologue) համար շատ հետաքրքրական գիւտերէն մէկն էր աճառներու եւ ջրերու երեքման արագութիւնը չափելու գործիքը (Myographion): Նոյնպէս մեծ ընդունելութիւն գտաւ Էնկլէր Գերմանացւոյն՝ բեւեռներու զանազան բարձրութեանց համար շինած ժամաչափը (Horoscope) կամ ժամացոյցը: Շատ զարմանալի ու բնագիտութեան ինչպէս նաեւ մեքենականութեան համար շատ հարկաւոր գործիք մըն էր, Վելդեէն Պրէմէնցի գործապետին, զանազան մարմնոց շիման աստիճանը չափելու եւ օճանելիքներուն ազդեցութիւնն իմանալու մեքենան:

Անգղիայի տեսաբանական գործիքները, ինչպէս են մանրագէտները, հեռագէտները եւ այլն, այնպիսի բարձր կատարելութեան հասած են, որ իրենց նմաններուն մէջ առաջին աստիճանը կրնան բռնել: Եթէ մէկու մը ըսելու ըլլանք, որ գործիք մը կայ, որն որ բոլոր Աստուածաշնչին բովանդակածը, մէկ քառակուսի մատնաչափ միջոցի մէջ քսանուերկու անգամ կրնայ գրել, տարակոյս չկայ որ չիհաւատար, եւ բացարձակապէս անկարելի կը համարի: Սակայն եւ այնպէս Նորման հանդիսահանը նոյնը կը հաստատէ Բիդերս Անգղիացւոյն մանրագրին վրայ (Micrographie): Վերոյիշեալ մանրագիրը, լծակներու միաւորութիւն մըն է, որոնք մարդուն ձեռքով թղթի վրայ գրածը, անոր ծայրը կ'անցընեն, ուր վրձինի մը միջոցով՝ (որուն ինչպէս շինուած ըլլալը գաղտնիք է,) այնպէս պզտիկցուած կը գրուի, որ հազուամենէն զօրաւոր խոշորացոյցներով կրնայ տեսնուիլ: Աս կերպով նոյն գործիքը՝ տող մը գրուած բան, մատնաչափի մը 2 1/2 միլիոներորդ մասին վրայ դէպ ի երկայնութեան կրնայ գրել, եւ որովհետեւ ասկէ աւելի պզտիկ միջոցի մէջ ալ կրնայ գրել, կարելի է հաշուով 22 Աստուածաշնչի համար միջոց գտնուի, վասն զի իրօք փորձն ընելն անկարելի է: Աս գիւտին գիտնական շահէն գործնական օգտին անցնելով, կ'երեւայ որ մանրագիրը թղթագրամները նենգութենէ ազատ պահելու իբրեւ միակ ապահով միջոց պիտ'որ գործածուի:

Քրիշ անթիւ անհամար զարմանագործ ու տես-

ներու արժանի բաներուն մէջէն կը յիշատակենք միայն Վիդվայտեան բաժանելու մեքենան, որն որ մատնաչափի մը միլիոներորդ մասն ալ կրնայ չափել. ծանրաչափ մը, որն որ մինչեւ հիմայ շինուածներուն ամենէն մեծն է, եւ նոյնը լեցընելու համար երեսուն լիտր սնդիկ կը գործածուի. Փարիզցի Գէօրիկ անուն արուեստաւորին՝ ձայնին ճօճումը չափելու գործիքը, ու Պրէզէ Գաղղիացւոյն՝ երակի զարկը համրելու կազմածը, որն որ թէ թիւն ու թէ սաստկութիւնն ամենայն ճշդութեամբ կը ցուցընէ: Հաշիւ ընելու մեքենայ մը կը տեսնուէր Իտալիայի բաժնին մէջ: Ասիկայ իր շարժումը ստեղծընկերով կ'ընդունի, եւ չորս գլխաւոր գործողութիւնները կարելի ճշդութեամբ կը շինէ: Սակայն ասկէ աւելի մեծ արդիւնք յառաջ կը բերէ Շայց Շուէտացւոյն հաշուի մեքենան, որն որ չորս գործողութիւններէն զատ՝ բարձրագոյն գործողութիւններ ալ կը շինէ: Անգղիայի ելեւեմից պաշտօնարանին եւ ուրիշ հրապարակական շէնքերու մէջ նոյնպիսի մեքենայ մը շարունակ կը բանի, եւ հանած արդիւնքը նաեւ կը շարէ, ուսկից հաստատատիպ տպագրութեամբ հազարաւոր օրինակներ կ'առնուին:

Առաջին (1851ին) արուեստից տեսարանին ժամանակը լուսագրութիւնը (Photographie) չէր գրտնուած, ուստի եւ չորեքտասներորդ բաժնը, որն որ լուսագրական պատկերներն ու անոնց վերաբերեալ կազմածները կը բովանդակէր, ամենեւին ներկայացուած չէր: Ինչպէս ծանօթ է, լուսագրութիւնը մէկ քանի տարւան մէջ այնպիսի բարձր կատարելութեան հասաւ, որ հիմայ ամենէն գործածական արուեստներէն մէկն եղած է: Աս բաժնին մէջ Անգղիա՝ 216, իսկ Գաղղիա՝ 118 հանդիսահաններով ներկայացուած էր: Գերմանիա ալ աս բաժնին մէջ ըստ բաւականին աղէկ ներկայացուած էր, ինչպէս յայտնի կը ցուցընեն Վոլքի Ախենի ու Փանէգէ Լայբցիկի լուսագրողներուն մարդաչափ լուսագրական պատկերները: Ռոնգալի Ռաւէննացին ուղղակի առնուած մանրադիտական լուսագրական պատկերներ տեսքի հանած էր, եւ որն որ աւելի անհատաւոր կ'երեւայ, Տըլա Ռիւ Գաղղիացին նոյն իսկ լուսինն ու արեւը լուսագրութեամբ առած էր: Լուսագրութեան վերաբերեալ քիմիական նիւթերու գեղեցիկ ժողովածոյք մը հանդէս հանած էր Շէրինկ Պերլինցին:

Հնգետասներորդ կամ ժամացոյցներու բաժնը արտաքոյ կարգի բազմազան էր, եւ գրեթէ միւս ամէն բաժնիներէն աւելի աղէկ ու կատարեալ ներկայացուած: Զանազան ճարտարարուեստ ճօճանաւոր ու կախելու ժամացոյցներէ զատ, կային նաեւ ծոցի ժամացոյցներ, որոնց բուն հայրենիքը Հելուետիայի Նայէնպուրկ ու Ճինեւրա նահանգներն են: Ասկէ 70 հանդիսահաններ հելուետական ժամագործութեան հրաշալի ցոյցերը տեսքի հանած էին: Բայց ամէնքն ամբողջ ժամացոյցներ հանդէս չէին հանած,

այլ իւրաքանչիւր որ ժամացուցին մէկ մասը: Ասով եղած է, որ Հելուէտիայի մէջ ժամացոյց շինելու արուեստը՝ հիմակ ունեցած անլուր բարձր կատարելութեան հասած է: Սակայն չիկրնար ուրացուիլ որ Անգղիացիք ալ նոյն արուեստին մէջ շատ յառաջացած են, եւ ինչպէս իրենք կը հաստատեն, իրենց ժամացոյցները ճշգուծեան կողմանէ ուրիշ ամէն երկիրները կը գերազանցեն: Անգղիական ժամանակաչափները (chronomètre) իբրեւ ամենէն ընտիր ճանչցուեցան: Աս ժամացոյցներուն կարգը կրնանք դնել նաեւ քանի մը ծոցի ժամացոյցներ, որոնք թէ իրենց արտաքոյ կարգի պղտիկութեամբն ու թէ գործուածքին ճարտարութեամբը, յիշատակի արժանի են: Այսպէս ճինելուցի Սորտէ ժամագործը, չորս փոստի տրամագիծ ունեցող ոսկիէ ժամացոյց մը հանդէս հանած էր, որն որ ամէն կարեւոր մեքենաներն ունէր: Ժողովրդեան համար ալ բաժնին ամենէն հետաքրքրական բանն էր, Լըկրանտրուա ճինելուցւոյն ինքնաշարժ սարեկիկը, որն որ լարուած ատեն՝ կը թռչէր, նոյն միջոցին նաեւ անմիջապէս անոր տակ շինուած նուագարան մը՝ թռչնոյն երգածը ճիշդ կը նմանցընէր: Ամենէն ետքը յիշատակենք նաեւ Շէփփըրտ Անգղիացւոյն ելեկտրամագնիսական ժամացոյցը:

Ք Ն Ա Պ Ա Տ Մ Ա Գ Ա Ե

Փիղ:

Փղին արտաքոյ կարգի մեծութիւնը, յաղթանդամութիւնը, իր դարմանալի խոհեմութիւնն եւ ուրիշ գուրջ յատկութիւնները մտածելով, պէտք է որ խոստովանինք թէ աս հսկայածեւ անասունն աշխարհքիս ամէն կենդանիներէն աւելի՝ առանձին եւ երկայնաձիգ նկարագրութեան մը արժանի է: Իր պատմութիւնը բովանդակ կենդանաբանութեան ամենէն զուարճալի ու հետաքրքրական մասն է: Մարդուս անվեհերութեան, յանգզնութեան ու հնարագիւտ հանճարոյն քիչ պատիւ չէ՝ երբ որ կը տեսնենք որ նաեւ փիղը կարող եղած է իր տերութեան տակ հնազանդեցընել, անոր զօրութիւնը կարգի կանոնի բերել եւ յօգուտ գործածել: Մարդուս յանգզնութիւնը՝ որուն առջեւն ամէն կենդանիք պէտք են խոնարհիլ, զմեզ ի վեճակի կը դնէ փղին վրայ այնպիսի օգտակար զննութիւններ ընելու եւ անանկ զարմանալի դէպքեր պատմելու, որոնք գուցէ առջի բերան առասպել երեւան. սակայն կրնանք ապահովընել, որ աս կենդանւոյն խոհեմութեան եւ ուրիշ առաւելութեանց ցոյցն եղող հարիւրաւոր դիպուածներէն ու պատմութիւններէն՝ միայն զանոնք ընտրած առած ենք, որոնք արժանահաստ, ականատես ու ականջալուր վկաներով ցուցուած ու հաստատուած են:

Հարիւրաւոր, մանաւանդ թէ հազարաւոր տարիներ անցած էին, եւ բնութեան աս զարմանալի ու հսկայածեւ որդիներն աշխարհքիս շատ մասերուն ղեռ անձանօթ էին. դարձեալ դարեր սահցեցան՝ մինչեւ որ հետաքրքր-

բութիւնը վախին յաղթեց ու փղին աւելի մտենալով՝ զանիկայ աղէկ մը զննեց, եւ վերջապէս ձեռք բերելու եւ ուրիշ երկիրներ տանելու յանգզնեցաւ: Հոմերոս փղին վրայ եւ ոչ յիշատակութիւն կ'ընէ, թէպէտ իր անմահական երգոց ասպարէզը՝ փղին հայրենեաց մէջն էր. գուցէ եւ ոչ անոր անունը լրած կամ զանիկայ ճանչցած էր: Նոյն իսկ Ս. Գրոց մէջ փիղ անունը մինչեւ Մակաբայեցոց ժամանակը (167) մինակ մէկ անգամ կը յիշատակուի. ուր որ դարձեալ խօսքը չէ թէ փղին՝ հապանոր աղբաներուն (փղոսկրի) վրայ է (Գ. Թագ. Ժ.): Բայց Արիստոտելի ժամանակն արդէն ծանօթ եղած կ'երեւայ: Անկից վերջը փղերն ընտանեցընեն, եւ անոնց գինի, օղի եւ ուրիշ ոգեւոր բնականք խմցընելով՝ պատերազմի մէջ գործածելն արեւելք հասարակ եղած էր: Անտիքրոս Մեծին բանակներուն մէջ փղաց մեծ բազմութիւն կը գտնուէր, որոնց թիւը երբեմն մինչեւ հարիւր քսանի կը հասնէր (Ա. Մակ. Ը.):

Եւրոպա բերուող առաջին փիղը՝ կ'երեւայ որ Փորթուկալի թագաւորին՝ Լուդովիկոս Ժ. Գ. ին (1668) պարգեւ բրածն ըլլայ: Ասիկայ Ափրիկէէն եկած ու տասնուչորս տարեան էր: Եւրոպա հասած ատենը՝ գետնէն մինչեւ ողնայարը ութ ու կէս ոտք բարձրութիւն ունէր, եւ վերայլ ապրած տասուիթեք տարեան միջոցին՝ հազիւ մէկ ոտք կրցաւ աճիլ: Անկէ հարիւր տարիէ աւելի ետքը մէյ մ'ալ վերայլի կենդանեաց պարտէզն ուրիշ փիղ տեսաւ: Հնդկաստանի կուսակալը (1773) Լուդովիկոս Ժ. Գ. ին երկու տարեան փիղ մը պարգեւ բրաւ, որն որ ամենէն աղէկ ու ընտանի տեսակներէն էր, եւ իր մարդասէր բնաւորութեամբը, զարմանալի ու միանգամայն զուարճալի գործքերով՝ ժողովրդեան ու բարձրութեան ու զուարճութեան առիթ եղաւ:

Գաղղիայի յաղթական բանակները Հոլանտայէն զոյգ մը փիղ աւար առին եւ ուրիշ յաղթանակներու հետ Փարիզ բերին: Եւ որովհետեւ փղին զարմանալի յատկութեանց վրայ գրած ատեննիս, աս երկու փղերը ստեպ պիտ'որ յիշատակենք անոր համար իրենց վրայ տեղեկութիւն մը կու տանք: Ասոնք իրենց մօրը քովէն յափրշտակուած ատեննին՝ հաղիւ մէկ տարեան էին. 1784ին Սէյլանէն Ֆլէսինկէն բերուած, անկէ ալ Լոյ տարուած էին, ուսկից զիրենք շատ անգամ Հասակ կը տանէին: Իսկզբան իրենց մեծ ազատութիւն կը շնորհուէր, եւ նոյնն իրենք մեծ ուրախութեամբ կ'ընդունէին, վասն զի անով միայն իրենց առաւելութիւնները բովանդակ արքունեաց, քաղաքին ու գաւառին առջեւը կրնային ցուցընել: Մեծ դիւրութեամբ աստիճաններէն վեր կ'ելլէին, սրահները կը մտնէին ու ժուր կու դային. այնպէս անվիաս կերպով կը կենցաղավարէին, որ իրենց վրայ ամբաստանութեան եւ ոչ ամենափոքր բիծը կրնար դրուիլ: Սակայն ասիկայ իրենց ոսկեգարն եղաւ, որն որ շատ շուտ անցաւ. ինչու որ քիչ մը վերջը գառագեղի մէջ խոթուեցան: Ալ անկից ետքը իրենց կեանքը շատ պարզ էր, ամէն մարդիկներէն ընդունած առատ ու աղէկ կերակուրնին դադրեցաւ. յաճախ այցելութիւններն ալ

կամաց կամաց սկսան քիչնալ, վասն զի նաեւ փիղը շատ տեսնելը՝ զմարդ կը ձանձրացընէ: — Հոլանտացւոց յաղթութիւնը՝ մեր փղաց վիճակը փոխեց: Գաղղիացիք Լոտի տիրելէն ետեւ ըստ օրինաց ամէն բան իրենց ձեռքը պիտ'որ անցնէր. ուստի եւ փղերն ալ յաղթողաց հպատակներն եղան ու Փարիզ փոխադրուեցան:

Եթէ մեծութեան ու յաղթանդամութեան դազափարը՝ գեղեցկութեան դազափարին հետ միացընենք, ամենայն իրաւամբ փիղը՝ գեղեցիկ կենդանիներէն մէկը պէտք ենք կոչել. ինչու որ թէպէտ եւ իր անդամոցը կապակցութիւնը նկատելով, գրեթէ երեք կենդինար ծանրութիւն ունեցող գլուխը, երկայն ականջները, գրեթէ անշարժ ու անդգայ պարանոցը, քանի մը կանգուն երկայնութիւն ունեցող պատիճը, սոսկալի աղբանները՝ սիւնաձեւ ու անշարժ օտուրները՝ գրեթէ անտեսանելի աչուքներուն ու արտաքոյ կարգի պզտիկ պոչին հետ համեմատելով, գեղեցիկ ամբողջ մը չեն կայուցաներ. սակայն աս ահագին ոսկրոտ ու յաղթանդամ զանգուածին՝ ուրիշ կենդանիներէն գերազանց ըլլալն ու անոնցմէ շատ առաւելութիւն ունենալը, ոչ ոք կրնայ ուրանալ:

Փիղն որչափ որ ալ ապուշ ու տմարդի կենդանի մ'երեւայ, սակայն եւ այնպէս զօրութեան, հանձարոյ, յաջողակութեան նկարագիր իր վրայ պակաս չէ: Իր արտաքին երեւոյթը կատարութիւն, բարկութիւն, սէր, հաճութիւն, փափաք կը ցուցընեն: Քթին շունչ առնելով տարովը, կոկորդէն հանած ձայնովը, ականջները վեր վար իջեցընելով կը խօսի: Թէպէտ աչուքները պզտիկ՝ բայց կայտառ, խորամանկութեամբ ու կրակով լեցուն են. անոնցմով՝ իր տիրոջը վրայ դարձուցած մէկ հայեցուածքը՝ սիրոյ, աղաչանաց, մատերմութեան, խորին մտածութեան եւ կամ ինչ եւ իցէ բազմանաց գազափարն անմիջապէս երեւան կը հանէ. իր ականջի բլթակներովը անոնք կը գոցէ եւ փոշիէն, հովէն, ձանձերէն ու փոքրիկ կենդանիներէն կը պահպանէ: Իր լսելիքն արտաքոյ կարգի ազնիւ ու սուր է: Երաժշտութիւնը շատ կը սիրէ. միտ դրուած է որ իր ընթացքն ըստ այնմ կը յարմարցընէ. եւ ինչպէս որ քաղցը ու սիրտ շարժող եղանակ մը՝ զինքը սիրոյ ու արգահատութեան կը շարժէ, նոյնպէս ընդ հակառակն անկարգ ու խառնածայն երաժշտութիւնը՝ վրան բարկութիւն ու կատաղութիւն կը բերէ: Անուշահատութեան ալ շատ բարեկամ է, ու ամէն ծաղկանց՝ բայց մանաւանդ նարնջենւոց հոտը մեծ հաճութեամբ կ'առնու. եւ որովհետեւ կրնանք ըսել թէ պատիճն իր ձեռքն է, անոր համար նոյնը կ'երկընցընէ ու անով ծաղկին հոտը կ'առնու. շատ անգամ անուշահոտ ծաղկանց փունջ մը կը շինէ ու երկայն փամանակ հոտուրտալէն ետեւ՝ բերանը կը դնէ, կ'ուտէ:

Փղին պատիճը՝ բնութեան ամենէն նշանաւոր գործքերէն մէկն է, եւ գուցէ բնութիւնն իր ամէն զարմանալու արժանի, հարուստ ու չքանուելու գործքերուն մէջ մեղի բան մը չիկրնար ցուցընել, որն որ իր շոշափուղական աղտութեամբը, դիւրաշարժութեամբը, ծռելու

յատկութեամբը, ուժգնութեամբը, արագութեամբը, մէկ խօսքով մարդկան մատուցած զանազան ու օգտակար ծառայութիւններովը փղին աս դարմանալի գործիքին հասասորի: Առանց պատճառի չէր որ հիներն աս գործիքը՝ փղին ձեռքը կ'անուանէին: Անտունն աս կազմածն ուզածին պէս կրնայ մինչեւ երեք կանգուն երկընցընել ու մինչեւ մէկ կանգուն կարճեցընել, դարձընել, ծռել եւ այլն: Եւ որովհետեւ պարանոցը խիտ քիչ կրնայ շարժել ու մեծ աշխատութեամբ միայն դարձընել, անոր համար աս պակասութեան տեղը իր պատճին միջոցովը կը լեցընէ, որն որ դնդերաց, նետրդներու, ջրաց հիւսուածք մըն է: Մարդ՝ աս երկայնութեան, լայնութեան ու կորութեան ձգուած դնդերներուն իրարու հետ ունեցած կապակցութիւնն աղէկ մը նշմարելով, պէտք է որ մեքենականութեան այս պարզ, բայց սքանչելի ու հաստատուն գործողութեան վրայ ապշի մնայ: Նոյնին ներքին կողմը կը գտնուին շնչառութեան ու հոտառութեան սնամեջ ձամբները, եւ կողմնակի թաղանթ մը զատուր՝ ըստ ամենայնի մեր քթին մէջ գտնուած երկու խողովակներուն նման՝ իրարմէ կը բաժնէ: Պատճին երկընցած ձոթը եւ կամ դուրս ցցուած եղջիւրի նման դիւրակոր մասը, փիղը յաջողակ մատերու պէս կրնայ գործածել, եւ ասով գրեթէ մարդկային ձեռաց պաշտօնը կը կատարէ: Ոսկւոյ ամենափոքր կտորուանքները վերցընել, սաստիկ կնճռեալ ու դժուարալոյծ հանդուցները լուծել, բանալիները դարձընել, պարզունակներն ու փեղկերը գոցել, շիշերուն բերնէն խցանը դուրս քաշել՝ ամենն ալ իրեն համար սչինչ բաներ են: Ականատես վիպներ կը հաստատեն թէ փիղ մը տեսած են, որն որ գրեւ եւ կամ գոնէ գրեւուն ձեւը զծագրել սորված էր: Ամենէն դիւրին գործքերէն սկսեալ՝ մինչեւ ամենէն դժուարիներն աս կազմածքին միջնորդութեամբը՝ զարմանալի ճարտարութեամբ կը կատարէ. ուստի եւ զօրաւոր ծառն, ինչպէս ամենէն տկար խոտը կը փրցընէ, կը կտարէ: Չինքը շարժարող մարդուն ոսկրները կտոր կտոր կ'ընէ շթանցն աս գործիքովը, որով որ քաղցրութեամբ ու փափկութեամբ իր բարեբարն ու ընկերը կը շոյէ, կը փայփայէ: Պատճին վերին մասովն ըստ ամենայնի այնպէս տեղւոյ մը օգը կը պարպէ, ինչպէս որ օգահանն ընդունարանին մէջի օգը:

Պիպի շարունակութիւն:

Ա Բ Ե Ի Տ Բ Ա Պ Ա Ն

Հարաւային պտուղներ: — Դ. Նոյն:

Սուշն (պոպոթ) ամենուն ծանօթ նշենւոյն պտուղն է: Աս ծառը միջակ մեծութիւն ու իրարմէ հեռու կեցող, գորշի զարնող կարմիր գոյնով բազմաթիւ ճիւղեր ունի, որոնք թափ մը կը ձեւացընեն. գեղեցիկ վարդագոյն ու ճերմկիկեկ ծաղիկներն՝ իր երկայն նիզակաձեւ, սրածայր, աղբայ աղբայ տերեւներէն յառաջ կը բացուին: Պտուղը կրկին կեղեւի մէջ կը կենայ. արտաքին կեղեւը կաշւոյ նման ու մազոտ է, իսկ ներքինը փայտէ է եւ բազմաթիւ կլոր ծակեր ունի: Արեւունքուն մէջ գեղձի կամ գորշի

զարնող հասարակօրէն մէկ եւ դուն ուրեք երկու հատ կ'ըլլայ: Նշենւոյն սկզբնական տեղն Ասիա ու հիւսիսային Ափրիկէ էր. սակայն հիմայ հարաւային ու քիչ տեղ նաեւ հիւսիսային Եւրոպա ալ պարտեղներու մէջ կը մշակուի: Հարաւային կողմերը՝ Փետրուարին, իսկ հիւսիսային դիւրը՝ Մարտին ու Ապրիլին կը ծաղիկ:

Տուրեւառի մէջ գտնուող նուշն ելած տեղերէն կը զանազանի:

Ա. Սպանիայի նուշը շատ տեսակներ կը բովանդակէ, որոնց մէջէն՝ 1. Մալակայի երկայնը, ամէն տեսակներէն ընտիր ու սուղ է. անոյշ ու մեծ հատեր ունի, որոնք ըստ մեծի մասին մաքրուած կ'ըլլան: Մալակային տարին հինգ հազար 2 կամ 4 կենդինարնոց տակառներ գուրս կը խաւրուի: — 2. Վալենսիայի կամ Ալիգանդէի նուշը՝ դարձեալ վեց տեսակի կը բաժնուի, որոնց մէջէն մեծ, լայն, հաւրթածեւ, արտաքուստ գորշ գեղին փոշուով ծածկուած ու անոյշ ճաշակով հատ ունեցողն ամենէն ընտիրն է: Աս նշէն տարին 10,000 կենդինար գուրս կը խաւրուի: — 3. Մայորգայի անոյշ նուշը՝ Ալիգանդէի, Պարսեւնայի, Ճենովայի ու Մարսիլիայի վրայէն կու գայ: Աս տեսակը կարծր կեղեւով պղտիկ հատեր ունի ու Վալենսիայի նշէն ստորին է, անոր համար 10% աժան կը ծախուի: Սակայն Մայորգայի դիւրաբեկ նուշը շատ ընտիր է եւ Բրովանսի տեսակին տեղ կը ծախուի:

Բ. Բորգոնիակէ Ալիարուիա ու Իսպանիայի տարիքաւորներուն մէջ յառաջ եկած տեսակը, որն որ Լիսապոնի նուշ կ'անուանուի, շատ լաւ, լեցուն ու համեղ է, եւ Բրովանսի նշէն յարգն ունի: Աս նուշը փոխաթնեւու մէջ փաթթուած 32 Փունտնոց արկեղներով կու գայ:

Գ. Իտալիայէն զանազան նշէ տեսակներ կու գան, որոնց մէջէն՝ 1. Ամբրոզին կամ Փլորենտիայի նուշ ըսուածը՝ աղնիւ, անոյշ ու հաճոյական ճաշակ ունի եւ գրեթէ Վալենսիայի նշէն կը հաւասարի: — 2. Հասարակ կամ Բուլիայի նուշը՝ Աբուլիայէն, Գալապրիայէն, Ապուլցոյցէն ու Պաղիլիգադայէն կու գայ: — 3. Սիկիլիայի նուշը Բուլիայի տեսակին պէս կ'ընէր ու հաստ է, բայց անկէ աւելի անոյշ, լեցուն ու դիմացկուն: Վալ տի Նորդիի հոյլտէն ու Էդնայի շրջանակներէն եւ ուրիշ քարուստ ու ծծումբոտ տեղերէն ելած նուշը Սիկիլիայի ամենալաւ տեսակն է: Սիկիլիայի Մասզարի, Մեսինա, Ճիրճէնդի, Գէոմինի, Գադանիա, Բալմա Աւիուսգա քաղաքներէն եւ ուրիշ զանազան տեղերէն՝ տարին 20,000 կենդինար նուշ, ստպարկներով կամ տակառներով դէպ ի թրիեստ, Լիվոռնոյ, կամ ուզդակի Անգղիա կը խաւրուի:

Գ. Հարաւային Գաղղիա այլեւայլ անոյշ, դառն ու դիւրաբեկ կեղեւով նշէ տեսակներ յառաջ կու գան, որոնց հատերը՝ թէեւ Իտալիայի նշի հատերուն չափ հաստ ու կ'ըն չեն, սակայն անկէ աւելի երկայն են: Գաղղիայի նուշը շատ դիւրաւ չկտորելուն ու շուտ չապականելուն պատճառաւ շատ կը փնտռուի: Բրովանսի տեսակը Գաղղիայի ամենալաւ նուշն է, մանաւանդ Էս քաղաքին շրջակայ տեղերէն ելածը: Բրովանսի նուշը Մարսի-

լիայի վրայէն 2 մինչեւ 3 կենդինարնոց տակառներով կը խաւրուի:

Ափրիկէէն՝ գլխաւորաբար Գունուզե, Ալճերիի ու Մարոգոյի ծովեզրներէն եկած նուշը ընտիր չէ, պղտիկ հատեր ունի, որոնք կտորտածներով խառն կ'ըլլան. աս տեսակը 1 1/2 կենդինարնոց կողմներով կու գայ:

Աղէկ նուշն (ստիուածը կ'իմանանք) ըստ բաւականին մեծահատ ու պինդ, կեղեւը դեղնի զարնող սիրուն գորշ իսկ միջուկը գեղեցիկ ճերմակ գոյնով եւ անոյշ ու քիչ մը ճարպոտ համով պիտի ըլլայ: Խորշումած, կտորտած, որդէ կերուած, բորբոսի հոտով ու համով նուշը՝ անպիտան է: Գիւրաբեկ նուշի փեճեկը դիւրաւ պիտի ջախջախի, եւ լեցուն, դրսէն՝ գորշիկ, իսկ միջուկը՝ ճերմակ գոյնով պիտի ըլլայ:

— Նուշը գոյ ու չոր տեղ պիտի պահուի. ստեպ ստեպ պէտք է մաղէ անցընել, եւ այս կերպով՝ մինչեւ երեք տարի կ'ընայ դիմանալ: Խոնաւ տեղ շուտ կը բորբոսի ու կ'որդնոտի:

— Նուշը զանազան կերակուր, բանդակ, նշի կաթ ու նշի ապուր շինելու եւ դեղագործութեան մէջ կը գործածուի: Գարձեալ անոյշ ու դառն նշէն մամլոյ միջոցով կամ ձմեռով՝ տեսակ մը ճարպոտ, դեղնիկ գոյնով եւ հաճոյական հոտով ու համով եղ կը հանեն: — Դառն նուշէն՝ ջրով զտելով, դառն նշի զօրաւոր հոտով ու այրիչ ճաշակով եթերական եղ մը կը պատրաստեն, որն որ շատ Պրուսիական կապոյտ ունենալուն համար սաստիկ թունաւոր է:

— Այրած կամ խահրած նուշ ըսուածը կ'իմանանք, մեխակի փոշոյ ու շաքարի մէջ թաթխուած նուշ է, զորն որ շաքարագործները կը ծախեն:

— Նշենւոյն փայտը՝ որն որ մութ գորշ գոյնով ու գեղեցիկ երակներով կ'ըլլայ, հիւսնութեան յարմար է:

Մ Ե Ն Բ Ա Լ Ո Ռ Բ Ք

Յումանոսի մը:

Անցեալները դէպ ի Հնդկաստան ճամբորդութիւն ընող նաև մը Համպուրկ դարձաւ. եւ նաւաստիները ճամբորդութեան ժամանակ իրենց պատահած հետեւեալ զարմանալի դէպքը պատմեցին: Արտաքոյ կարգի խոշոր շանաձուկ մը ամբողջ հինգ օր նաւուն ետեւէն կու գար, եւ նաւէն ծով նետուած ամէն բան անհաւատալի շտապներով թեամբ կ'ուտէր. սակայն նաւաստիներուն բրած ամէն ջանքին դէմ զինքը բըռնելն անկարելի եղաւ: Նոյն միջոցին նաւաստիներէն մէկը մեռնելով, մարմինն ըստ սովորութեան ծովուն տակը պիտի թաղուէր. բայց թնդանօթի դնդակներով ծանրացած մարմինը ջրոյն երեսը հասնելուն պէս, ահագին գազանն երեւցաւ, եւ մարմինը տախտակով ու թնդանօթի գնդակներով մէկտեղ կ'ըլլէր: Զարհուրելի գազանը նոյն գործողութիւնն այնպէս յանկարծ ուժգնութեամբ գլուխ հանած էր, որ քիչ մնաց նաւաստիները՝ որոնք իրենց ընկերին վերջին թաղման հանդէսը կատարել կ'ուզէին, տախտակը բռնած ատեննին՝ մէկտեղ ծով պիտի իյնային: Ասոր վրայ նաւաստիներուն կատարութիւնը վերջին աստիճանի հասնելով, միտքերնին դրին որ գազանը սպաննեն: Աս նպատակաւ ջրին տակը վառուող ռումբ մը շինեցին, եւ նոյնը կովու կաշոյ մէջ փաթթելով՝ երկրորդ օրը գազանին երեւցած ատենը՝ ծովը նետեցին: Շանաձուկը նոյնը շուտ մը կ'ըլլէր, եւ նաւաստիներն իրեն բարի ախորժակ

մաղթեցին: Հասարակօրէն բան մը առնելէն ետեւ՝ կը հեռաւոր . ուստի նաւաստիները կը սպասէին որ աս անգամ ալ նոյն ընէ, ապա թէ ոչ՝ ումի՞ն ճայթած ատենը նաւը վտանգի մէջ կ'իյնար: Սակայն ամենուն զարհուրանքովը նաւէն չհեռացաւ: Կաւաստիներէն մէկն ընկերներուն ըսաւ որ կ'երեւայ թէ պատարը ստամբքսին քիչ եկեր է, անոր համար պէտք է ուրիշ աւելի մեծ բան մը նետել: Ամէնքն իր խորհրդին հաւանեցան, ուստի եւ պարկի մը մէջ պարանի կտորներ ու աղոտոտ լաթեր լեցուցին եւ ծով նետեցին: Հատակը դազանը շուտ մը ան ալ կ'ընց, եւ առոյգ ու զուարթ անկէ հեռացաւ. վասն զի ստամբքը մէկ օրուան համար բաւական լեցուն էր: Սակայն այլ ումի՞ն ճայթեց ժամանակն եկած էր, եւ նաւաստիները մեծ հետաքրքրութեամբ դազանին գացած կողմը կը նայէին, հանդիսին ինչ վերջ ունենալը տեսնելու համար: Հանաձուկը ջրին մէջ շարժում մ'ըրաւ, որուն վրայ խորունկ շառաչելու նման ձայն մը լսուեցաւ, որն որ մինչեւ նաւն ալ շարժեց: Հանաձուկն ջրին տակ սուզուած տեղը, ալիքներն երկու բաժնուեցան եւ ճիշդ բարձր սիւն մը շոգուով ու ջրոյ կաթիլներով պատած՝ վեր բարձրացաւ, եւ դազանին մանն կտորները ջուրն ինկան: Կտոր մ'ալ նաւուն վրայ ինկաւ, զորն որ իրենց վրէժն առնելուն վրայ ուրախացած նաւաստիները, իրբեւ յիշատակ պահեցին:

Ռոսաստանի սմանէն հարտուս մարդը:

Ռոսաստան աղնուականներ կան, որոնք 70—100.000 օտուկ ունին: Հէրէ-մէդէ-Ֆ Ռուսի աղնուականներուն մէջ ամենէն հարուստն է. վասն զի իր իշխանութեան տակ 120.000 ստրուկ ունի, որոնց մէջ միլիոններու տէր եղողներ ալ կը գտնուին: Կոյն կոմիին տարեկան մուտքը 1 1/2 միլիոն արծաթ-րուպլի (6.250.000 Ֆրանք) կը համարուի: Ամէն մէկ ստրուկ տարին տիրոջը 10—15 րուպլի կը վճարէ, ուստի եթէ աս թիւը հիմայ Ռոսաստանի մէջ գտնուող ստրուկներուն թիւոյն հետ (գրեթէ 230 միլիոն) բազմապատկելու ըլլանք. եւ ամէն մէկ ստրուկին գինը 300 րուպլի (1250 Ֆրանք) հաշուելու ըլլանք, ստրուկութեան վերցուելուն պատճառաւ Ռուսի աղնուականներուն կրած վնասը՝ 25 միլիարէն վար չիմնար. որ ըսել է՝ ճիշդ Անգղիայի ազգային պարտքին չափ:

Գողերու ընկերութիւն մը:

Իւրօպայի ամէն մայրաքաղաքներուն մէջ անթափանցելի գաղտնիք մըն է միշտ թէ ինչ կերպով գողերն առանց ուստիկանութեան յայտնուելու՝ կրնան ձեռքէ հանել գողցած ոսկի եւ ականակուռ զարդերնին: Լոնտոնի եւ Փարիզի օտտիկանութիւնները, թէեւ անուանի են ամէն կերպ գաղտնիքները գտնելովնին, ի վերայ այս ամենայնի աս տեսակ գողութիւնները գրեթէ երբեք չեն կրնար ձեռք անցընել: Ահրջապէս աս օրերը աս գաղտնիքն ալ լուծուեցաւ Աւստրալայի Սիտնի քաղաքն եղած գիւտով մը, որով իմացուեցաւ թէ հոն բոլոր Եւրոպայի մէջ տարածուած գողերու ծիւղացեալ ընկերութեան մը գլխաւոր պահեստի տեղը կայ եղբը, ուր ամէն կողմանէ գողցուած նիւթերը խաւրելով՝ անոնց գինն ոսկի աւազով կ'ընդունին եղբը: Ինչպէս ամէն գիւտերը, նոյնպէս աս ալ ըստ պատահման եղաւ: Անգղիացի հարուստ տիկին մը, որն որ քիչ մը յառաջ Սիտնի հասած էր, քաղաքին ամենէն գեղեցիկ փողոցը պտրտած ատեն, ականազօրծի մը խանութը գրուած մեծագին մանեակ մը մէկէն աչքը զարկաւ: Որչափ աւելի նայեցաւ, այնչափ աւելի նմանութիւն գտնելով նոյն մանեակին եւ երկու տարի յառաջ Լոնտոն իրմէ գողցուած մէկ մանեակին մէջ, մէկէն ներս մտաւ, եւ առանց խօսք մ'ըսելու՝ առաւ մանեակը, ճարմանդին վրայ գտնուող պղտիկ զգանակ մը կոխեց, եւ զարմացման եւ ուրախութեան աղաղակ մը փրցուց, անոր մէջը մագէ պղտիկ հիւսուածք մը գտնելով: Խանութիւն տէրը, որն որ իսկզբան զարմացած՝ եղածին կը նայէր, վերջապէս բանին էութիւնը հասկընալով, մեծ այլաշուրթեան եւ վախի մէջ ինկաւ: Տիկինը մանեակին իրմէ ինչ-

պէս գողցուելուն պատմութիւնը պատմեց. իսկ վաճառականն անոր առաջարկածին պէս ոտտիկանութեան երթալու տեղ, ուրիշ աւելի պարզ առաջարկութիւն մ'ըրաւ, այսինքն՝ որ մանեակն առնու երթայ: Աս արտաքոյ կարգի առատաձեռնութեան վրայ տիկինը զարմանքի երթալով, դէպքն ոտտիկանութեան իմացուց, որն որ անմիջապէս սկսաւ հետազոտութիւններ ընել: Եղած քննութիւններէն իմացուեցաւ որ խանութին մէջ գտնուած բոլոր ականակապ զարդերը գլխաւորաբար Փարիզ ու Լոնտոն եղած գողութիւններէն յառաջ եկած բաներ են: Ռուստի եւ շուտ մը խանութին մէջի ամենէն մեծագին զարդերուն պատկերները լուսանկարով անուեցաւ եւ ամէն մեծ մայրաքաղաքները խրկուեցան: Տարակոյս չկայ որ շատ մարդիկ մեծ ուրախութեամբ պիտի ծանչնան իրենց կորսնցուցած նիւթերը եւ զանոնք այնչափ ժամանակուան հեռաւոր ճամբորդութենէ կամ քարտանքէ ետքը սիրով պիտի ընդունին:

Օճառի (Մայրոնի) տոռակ:

Բոլոր Գալիֆոռնիայի մէջ կը բուսնի աս զարմանալի տոռակը: Գէպ ի Կոյեմբեր ամսոյն մէջերը իր տերեւները կը սկսին երեւնալ. տոռակը երբեք մէկ ոտնաչափէն աւելի բարձրութիւն չ'ունենար: Աս տոռակը բոլոր Գալիֆոռնիայի մէջ լաթ լուարու կը գործածուի ու խիստ ընտիր օճառէն աւելի արէկ մաքրիչ կը համարուի: Ասիկայ օգտու գործածուելու համար տեղացի անկին բունին կեղեւները կը զատեն կը հանեն, ու լուացուելու բաները ջրի մէջ թռչելէն ու կակղցընելէն ետքը՝ տնկին ծուծով կը չիեն:

Աղաջրով մահտոռնէ ազատութիւն:

Գործի Եւ լ'Օր լրագիրը հետեւեալ դէպքը կը պատմէ, որուն ճշմարտութիւնն ինք կ'երաշխաւորէ: Ամէն մ'աւելի էր, որ յիսունուհինգ տարուան մարդ մը կոկորդին մէջ խեղդիչ ցաւ մը կ'իմանար, որմէ՝ խօսելու եւ աւելի եւս կերակուր ուտելու արտաքոյ կարգի դժուարութիւն կը պատճառէր: շատ անգամ ալ բերնէն առատ արիւն կու գար: Հատ բժիշկներէ դարմանութիւնը՝ ալ՝ ամենեւին օգուտ մը չտեսաւ. մեւ նաւանը թէ վիճակն ան աստիճանի դէշցաւ, որ ալ ամէնքն անոր առողջանալէն յոյսերնին կորեցին: Տեղոյն Ժողովրդապետը զինքը տեսնելու երթալով եւ գտնուած խեղճ վիճակը տեսնելով, բովի մարդիկներէն հիւանդութեան սկզբնաւորութեան վրայ տեղեկութիւններ ուղեց, եւ գլխաւորաբար աս հարցուց որ արդեօք անխոհմանութեամբ մը առիթ տուած է: Լսած խօսքերէն այնչափ միջոյն իմացաւ, որ օր մը խիստ սառ ատեն սաստիկ քրտնած ըլլալով, գետինը ծածած առուակէ մը լափելով շատ ջուր խմած էր: Աս որ լեց Ժողովրդապետը, ջրոյ մէջ սաստիկ շատ աղ լուծելով, քիչ մը բան խմչընել տուաւ հիւանդին, որն որ անմիջապէս եւ առանց նեղութիւն մը կրելու՝ բերնէն խոշոր տղուկ մը գուրս հանեց: Կոյն վայրկեանէն խօսելու եւ կերակուր ուտելու դժուարութիւնը կորեցաւ, եւ իրբեւ կիսամեռ նկատուած մարդը՝ քանի մ'օրուան մէջ առողջանալով՝ սկսաւ իր գործերուն զբաղել:

Արեւիկն միւնչեւ 1845ին մտած մարդիկներուն թիւը:

Ճենովայի մը հաշիւ ընելով գտաւ, որ Արեւիկն, այսինքն աշխարհքիս ստեղծմանէն մինչեւ 1845 մեռնող մարդիկներուն թիւը 26 քառիլիոն, 628 եռիլիոն, 843 երկիլիոն, 285 միլիոն, 75.840 կը հասնի: Ծնած մարդիկներուն չորսին մէկը 7 տարեկնէ, իսկ կէսը 17 տարեկնէ յառաջ կը մեռնին: 10.000 հազար մարդիկներու մէջէն, մէկ հոգի միայն 100 տարին կը հասնի. 100 հոգւոյ մէջէն 6 հոգի միայն վաթսուան տարեան, իսկ 500 հոգիէն մէկ հոգի մը միայն ութսուն տարեկան կ'ըլլայ: Բոլոր աշխարհքիս բնակիչներէն, որոնք շուրջ հազար միլիոն կը համարուին, տարին 33.333,000 հոգի կը մեռնին, որ ըսել է՝ ամէն մէկ երկրորդական վայրկեան մէկ հոգի մը: